# Արձանագրություն N02

# ԿՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-24/06 ծածկագրով գնանշման հարցման հայտերի բացման և գնահատման նիստի

Գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72 շ.
ժամը՝ 10:00

13.08.2024թ.

Նիստին մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի
Նախագահ՝ Հ. Մելքումյանս
Անդամներ՝ Մ. Հովհաննիսյան, Ա. Սարիբեկյան
Քարտուղար՝ Ա. Գարսևանյան

1. Գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հ. Մելքումյան

Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝0

2. Տեղեկատվություն հայտերի բացման և գնահատման նիստի վայրի, օրվա, ժամի մասին

Հայտերի բացման նիստը տեղի ունեցավ Ակունքի համայնքապետարանի վարչական շենքում, 2024 թվականի օգոստոսի 13-ին ժամը 10:00-ին:

3. Հայտ ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները

Հայտ են ներկայացրել՝

| | ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ՄԱՍՆԱԿՑԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵ, ՀԵՌԱԽՈՍ, ԷԼ. ՓՈՍՏ |
|---|---|---|
| 1 | <<ԿՈՏԱՅՔԻ ՃՇՇ>> ՍՊԸ | ՀՀ Կոտայքի մարզ,գ.Բալահովիտ, 1փողոց թիվ 58,<br>հեռ. 091 40 66 86, էլ. հասցե kotaykr@gmail.com |
| 2 | <<ԲԱԼԱՀՈՎԻՏ-1>> ՍՊԸ | ՀՀ Կոտայքի մարզ, գ.Բալահովիտ, 8 փ 17-17/1<br>հեռ 091 428 394, էլ. հասցե balahovit-1@yandex.ru |

4. Տեղեկություններ ծրարները կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգին համապատասխանության մասին

Հ. Մելքումյան

Ծրարները կազմվել են մրցույթի հրավերով սահմանված կարգին համապատասխան

Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝0

5. Տեղեկատվություն մասնակիցների ներկայացրած հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

Հ. Մելքումյան

Մասնակիցների ներկայացրած հայտերում առկա են ԿՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-24/06 ծածկագրով մրցույթի հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝0

6. Տեղեկություններ մասնակիցների ներկայացրած հայտում առկա փաստաթղթերի հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխանության մասին:

Հ. Մելքումյան

Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը կազմվել են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան և գնահատվել են բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝0

7. Տեղեկություններ նախահաշվային գների, մասնակիցների ներկայացրած գնային առաջարկների և զբաղեցրած տեղերի մասին

Հ. Մելքումյան

ՀՀ դրամ, առանց ԱԱՀ

| Չ/հ | Ապրանքի | | Տվյալ ապրանքի համար հայտ ներկայացրած մասնակիցների Անվանումները/ գնային առաջարկները | |
|---|---|---|---|---|
| | անվանումը | Նախահաշվային գինը | ԿՈՏԱՅՔԻ ՃՇՇ ՍՊԸ | ԲԱԼԱՀՈՎԻՏ-1 ՍՊԸ |
| 1 | ՀՀ Կոտայքի Ակունք համայնքի Կոտայք բնակավայրի 1-ին փողոցի ասֆալտապատման աշխատանքներ | **44 518 700 /քառասունչորս միլիոն հինգ հարյուր տասնութ հազար յոթ հարյուր/** | **27 785 622 /քսանյոթ միլիոն յոթ հարյուր ութսունհինգ հազար վեց հարյուր քսաներկու/** | **25 597 500 /քսանհինգ միլիոն հինգ հարյուր իննսունյոթ հազար հինգ հարյուր /** |

Ընտրված մասնակից է որոշվել բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից 1-ին չափաբաժնի համար նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցը՝ <<ԲԱԼԱՀՈՎԻՏ-1 ՍՊԸ>>-ն է:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝0

8. Գնահատման արդյունքների ամփոփում

Հ. Մելքումյան

“Գնումների մասին” ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն 1-ին չափաբաժնի մասով անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը: Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել <<**ԿՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-24/06**>> ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Անուշ Գարսևանյանին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝0

Գնահատող հանձնաժողովի

Նախագահ՝ Հ. Մելքումյան ________________

Անդամներ՝

Մ. Հովհաննիսյան________________

Մ. Սարիբեկյան________________

Քարտուղար՝ Ա. Գարսևանյան ________________